

## ԿԻՆ-ԲԺՇԿԻ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ ԵՎ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Այս տարի լրացավ ակնաբույժ, ՉՍՄՉ վաստակավոր բժիշկ  
Աննա Նիկոլայի Նավասարդյանի ծննդյան 140-ամյակը*



Աննա Նիկոլայի Նավասարդյանը ծնվել է 1880թ. փետրվարի 25-ին Երևանում նահանգային քարտուղար-իրավաբանի ընտանիքում: Տարրական կրթությունը ստացել է Սուրբ Գայանեան եկեղեցական ծխական Յայոց օրիորդաց ուսումնարանում, որն ավարտել է 1892թ.: Այնուհետև ուսումը շարունակել է Թիֆլիսի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի իգական գիմնազիայում: 1898թ. ավարտելով գիմնազիան ոսկե մեդալով և 2 տարի մաթեմատիկայի լրացուցիչ դասընթացից հետո՝ 1900թ., իրավունք է ստացել աշխատելու որպես ուսուցչուհի: Այդ տարիներին նա բավականին ակտիվ զբաղվել է նաև հասարակական գործունեությամբ. ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ եղել է ռուսական բանակին սատարող ընկերության անդամ: Նա շատ շուտ է զրկվել հորից և ստիպված է եղել ինքնուրույն հարթել իր ուղին: Մասնավոր հիմունքներով դասավանդել է մաթեմատիկա, լեզուներ, այդ թվում՝ ֆրանսերեն: Եվ նպատակը մեկն էր. դրամ կուտակել՝ ուսումը երկրից դուրս շարունակելու համար, քանի որ այդ տարիներին Յայաստանում նման հնարավորություն չկար: Նրա երա-

զանքն էր բժիշկ դառնալ և վերադառնալով հայրենիք՝ պիտանի դառնալ իր ժողովրդին: 1904թ. Աննա Նավասարդյանը, Երևանի Արական գիմնազիայում հաջողությամբ հանձնելով քննությունները, երաշխավորվում է ուսումը շարունակելու Սանկտ-Պետերբուրգի Կանանց բժշկական ինստիտուտում: 1905թ. նա մեկնում է Սանկտ-Պետերբուրգ և ընդունվում Կանանց բժշկական ինստիտուտ, որը 1911թ. նույնպես ավարտում է գերազանցությամբ՝ ստանալով բժշկի որակավորում: 1911թ. վերադառնում է Երևան և զբաղվում պրակտիկ բժշկությամբ: Աշխատել է սկզբում որպես մանկաբարձ-գինեկոլոգ, իսկ հետո՝ ակնաբույժ: Ընդ որում՝ ունեցել է մասնավոր պրակտիկա, սակայն շատ հաճախ այն եղել է ի վնաս իրեն, որովհետև չունենալ հիվանդներից երբեք գումար չէր վերցնում, իսկ դեղերն էլ գնում էր իր հաշվին: Մեկ տարի անց նա հրավիրվում է որպես բժիշկ աշխատելու Յովհաննես Յովհաննիսյանի մասնավոր բուժարանում: 1915թ. հրավեր է ստանում աշխատելու Սիմֆերոպոլի հիվանդանոցում, սակայն հրաժարվում է՝ համարելով, որ ավելի անհրաժեշտ է Յայաստանում: Յետագայում՝ 1916-1922թթ. նա աշխատանքի է անցնում Երևանի աչքի քաղաքային բուժարանում՝ որպես վարիչ: Այնուհետև 1922-1930թթ. աշխատում է Երևանի 2-րդ հիվանդանոցի աչքի բաժանմունքում, իսկ 1930-1952թթ.՝ գլխավորում է Երևանի քաղաքային 2-րդ պոլիկլինիկայի աչքի կաբինետը: Նրա կողմից իրականացվում էին բարդ վիրահատություններ տրախոմայով և աչքի այլ հիվանդություններից տառապող հիվանդների շրջանում: Եվ ինչպես պատմում էին, վիրահատությունից հետո նա չէր հեռանում հիվանդի կողքից: Չարմանալի չէ, որ երբ նրա դուստրը նույնպես ցանկացավ ընտրել բժշկի մասնագիտությունը, թույլ չտվեց՝ ասելով. «Բավական չեն քո հոգսերը, պետք է ապրես հիվանդների ամենօրյա հոգսերով և տառապանքներով»: Եվ դուստրն ընտրեց երաժշտի մասնագիտությունը և ընդունվեց Կոնսերվատորիա, որն ավարտելուց հետո աշխատեց երկար տարիներ դասավանդեց Կոմիտասի անվան Կոնսերվատորիայում:

Աննա Նիկոլայի Նավասարդյանը ամբողջ կյանքը նվիրել է ուսմանը և իր սիրած մասնագիտությանը, և միգրացե այդ է եղել պատճառը, որ այն ժամանակների համար շատ ուշ՝ 37 տարեկանում է կազմել ընտանիք (ի դեպ, ամուսինը նույնպես բժիշկ էր):





Բժիշկ Ա.Ն. Նավասարդյանը (առաջին շարքում ձախից՝ երկրորդը) բժիշկների կոլեկտիվում, 1926թ.:



Գիմնապիան գերազանցությամբ ավարտելու կապակցությամբ ստացած ոսկե մեդալը (երկու կողմերից), 1898թ.:



Ա.Ն. Նավասարդյանը հետապնդում է Վորակոչիկին, 1942թ.:



Ա.Ն. Նավասարդյանի աշխատությունը տրախոմայի վերաբերյալ, 1929թ.:



Ա.Ն. Նավասարդյանին շնորհված Լենինի շքանշանը, 1951թ.:

Աննա Նավասարդյանի մատուցած ծառայության մասին 1967թ. հետմահու գրել է Մ.Ս. Դավլաթյանը «Պարտված հիվանդություններ» գրքում («Հայաստան» հրատարակչություն), որտեղ նշվում է, որ Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ 1918-1920թթ., երբ տրախտման՝ «անդամնալի կուրություն հանգեցնող այդ անիծյալ հիվանդությունը, բռնում էր յուրաքանչյուր երրորդ մարդու օձիքից...» (էջ 55), «աչքի հիվանդություններից ու բարդացած տրախտմայից

տառապող գաղթականներով լցված Հայաստանում կար մեկ ակնաբույժ. դա Աննա Նավասարդյանն էր, որի վաստակն ու ծառայությունը մեծ է հատկապես սովետականացումից հետո» (էջ 56): Ի դեպ, Աննա Նավասարդյանն ունի տրախտմայի վերաբերյալ աշխատություններ, որոնք տպագրվել են դեռևս 1929 և 1933թթ: Մեծ Երա՝ որպես ակնաբույժի վաստակը նաև զորակոչիկների ընտրության հարցում, և իր անբասիր գործունեության համար զինկոմիսարիատից տարիներ շարունակ ստացել է շնորհակալագրեր: Հայրենիքին մատուցած ծառայությունների համար նա արժանացել է կառավարական մի շարք պարգևների: Աննա Նիկոլայի Նավասարդյանը պարգևատրվել է «1941-1945թթ. քաջարի աշխատանքի համար» շքանշանով (1945թ.), Հայկական ՍՍՌ առողջապահության վարչության և բժշկական միության պատվոգրով (1948թ.), 1945թ. նրան շնորհվել է Հայկական ՍՍՌ վաստակավոր բժիշկի կոչում: Հայրենիքին մատուցած ծառայությունների համար Ա.Ն. Նավասարդյանը 1951թ. ապրիլին պարգևատրվել է ՍՍՀՄ բարձրագույն պարգևով՝ Վ.Ի. Լենինի շքանշանով:

Մահացել է 1957թ. փետրվարի 11-ին Երևանում:

ԵՊԲՀ ֆիզիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր  
Աննա Տեր-Մարկոսյան  
(Ա.Ն. Նավասարդյանի թոռնուհի)